Արդարադատության
Նախարարություն

# ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

## «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արձանագրությունում թեև առկա չեն Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող նորմեր, սակայն այն պարունակում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր:

Մասնավորապես, Արձանագրությունը անդամ պետությունների համար նախատեսում է պարտավորություն սահմանելու քրեական պատասխանատվություն ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելու (հոդված 4), ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնելը ֆինանսավորելու (հոդված 5), ահաբեկչության նպատակով արտերկիր մեկնումը կազմակերպելու կամ այլ կերպ դրան օժանդակելու համար (հոդված 6): Վերոնշյալ հանցագործությունները նախատեսված չեն ո՛չ գործող քրեական օրենսգրքով, ո՛չ քրեական նոր օրենսգրքով (ընդունված 05.05.2021 երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ, սակայն դեռևս գործողության մեջ չդրված): Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխությունները քրեական օրենսգրքում՝ սահմանելով քրեական պատասխանատվություն վերոնշյալ արարքների համար:

Արդարադատության
Նախարարություն

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Արձանագրությունը ենթակա է վավերացման ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետերի դրույթների հիմքով: Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսելու դեպքում Արձանագրությունը ենթակա է վավերացման նաև ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետերի դրույթների հիմքով:

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

8/16/2021

X

Suren Grigoryan

Signed by: GRIGORYAN SUREN 3414921200 **ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**